

# Գիտության ոլորտի նոր գաղափարներն ու ծրագրերը

<http://www.asparez.am/egac-gitutyun-hy/#.WtRG7dR95kj>

## ԵԳԱԾ-ի նորարարությունը. նոր ակնկալիքներ

Ի տարբերություն նախորդ տարիների, 2018 թվականին «Երիտասարդ գիտնականների աջակցության» ծրագիրն (ԵԳԱԾ) հայտարարելու է երկու մրցույթ՝ միջգիտակարգային գիտական դրամաշնորհի եւ արտասահմանում հայազգի գիտնականների լաբորատորիաներում վերապատրաստման վերաբերյալ, որոնք «Երիտասարդ գիտնականների աջակցության» ծրագրի ղեկավար մարմնի անդամ, ՀՀ ԳԱԱ Երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահ Գեորգ Վարդանյանի գնահատմամբ, բավական կարելու են:

Միջգիտակարգային գիտական դրամաշնորհային մրցույթի նպատակն է՝ նոր մշակույթի ձեւավորումը: Նախատեսվում է նպաստել տարբեր գիտահետազոտական ինստիտուտների, կառույցների գիտական լաբորատորիաների երիտասարդ գիտնականների համագործակցությանը, որի արդյունքում, ըստ Գ. Վարդանյանի, ձեւավորվելու են գիտական նոր խմբեր, որոնք իրականացնելու են ծրագրեր՝ Հայաստանում հիմք դնելով գիտական նոր լաբորատորիաների ստեղծմանը:

Հաջորդ կարելու դրամաշնորհային մրցույթը երիտասարդ գիտնականների՝ արտասահմանյան լաբորատորիաներում վերապատրաստվելն է:

«ԵԳԱԾ-ի շրջանակում արդեն երկու տարի անընդմեջ անցկացրել ենք հայազգի գիտնականների համահայկական համաժողով, որի ընթացքում արտերկրից Հայաստան ժամանած հայազգի նշանավոր գիտնականների հետ ձեռք են բերվել համագործակցության պայմանավորվածություններ, ստեղծվել է Մփյուռքահայ գիտնականների ասոցիացիա: Հայազգի գիտնականներն իրենց գիտական լաբորատորիաներում, գիտահետազոտական ինստիտուտներում պատրաստ են անվճար հիմունքներով ընդունել եւ աջակցել այն երիտասարդ գիտնականներին, ովքեր ցանկություն կունենան վերապատրաստվելու արտերկրում: ԵԳԱԾ-ի շրջանակում կանցկացվի մրցույթ, ծրագիրն հոգալու է արտասահմանում վերապատրաստվող երիտասարդ գիտնականների կեցության եւ ճանապարհային ծախսերը», -ասում է Գ. Վարդանյանը:

Արտասահմանում վերապատրաստվելուց հետո երիտասարդները պարտավոր են վերադառնալ եւ իրենց ստացած գիտելիքները, հմտությունները ծառայեցնել հանուն Հայաստանի:

«Հայազգի հայտնի գիտնական Արտյոմ Օգանովի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց եւ «Երիտասարդ գիտնականների աջակցության» ծրագրով մեկ երիտասարդ մեկնեց, վերապատրաստվեց Օգանովի գիտական լաբորատորիայում, ապա վերադարձավ Հայաստան: Հիմա նա համատեղ դրամաշնորհային ծրագրի է մասնակցում, եւ ինքն է հիմնում իր նոր գիտական լաբորատորիան, ցանկություն ունի Հայաստանում ծավալել գիտական գործունեություն», -լավագույն օրինակը նշելով՝ ասում է Գ. Վարդանյանը:

«Երիտասարդ գիտնականների աջակցության» ծրագիրը մեկնարկել է 2012 թվականից, տարեկան բյուջեն 100 մլն ՀՀ դրամ է: Ծրագրին կարող են մասնակցել մինչեւ 35 տարեկան (ներառյալ) գիտնականները:

Դրամաշնորհների տրամադրումը կատարվում է մրցութային եղանակով: Դրամական աջակցությունն հիմնականում հատկացվում է 10 գիտական ուղղություններով՝ ազդեցության գործակից ունեցող պարբերականներում տպագրության, խրախուսման, գիտաժողովների մասնակցության աջակցության, գիտական միջոցառումների կազմակերպման աջակցության, գիտական սարքերի, նյութերի ձեռքբերման աջակցության, արդյունավետ երիտասարդ գիտաշխատողների մրցութներ եւ այլն:

**Երկրաֆիզիկայի եւ ինժեներային սեյսմաբանության ինստիտուտը ՀՀ համար իրականացնելու է երկու կարևոր ծրագիր**

«Երիտասարդ գիտնականների աջակցության» ծրագրերի հայտարարած մրցութներին ակտիվորեն մասնակցում է Գյումրիում գործող ՀՀ ԳԱԱ երկրաֆիզիկայի եւ ինժեներային սեյսմաբանության ինստիտուտը. ծրագրի շրջանակում ինստիտուտն արդեն կազմակերպել է 3 միջազգային գիտաժողով: 3-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովը կազմակերպել էր նախորդ տարի նոյեմբերին «Երկրաֆիզիկայի, ինժեներային սեյսմաբանության, սեյսմակայուն շինարարության արդի խնդիրները» խորագրով:

Գիտաժողովի թեման սերտորեն առնչվում էր ՀՀ սեյսմիկ անվտանգության համակարգի զարգացման հայեցակարգով նախատեսված սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ծրագրին:

ԳԱԱ երկրաֆիզիկայի եւ ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի տնօրեն, երկրաբանական գիտությունների թեկնածու Ջոն Կարապետյանի գնահատմամբ՝ 2017 թվականն արդյունավետ տարի է եղել գիտական կառույցի համար:

3-րդ միջազգային գիտաժողովին մասնակցում էին հեղինակավոր կազմակերպությունների մասնագետներ: Գիտաժողովի ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել երկու ծրագրերի համատեղ իրականացման շուրջ:

Ջ.Կարապետյանի փոխանցմամբ՝ երկրաֆիզիկայի եւ ինժեներային սեյսմաբանության ինստիտուտը Ռուսաստանի հիմնարար հետազոտությունների հիմնադրամի եւ ՀՀ գիտության պետական կոմիտեի համատեղ հայտարարած մրցութին շահել է երկու ծրագիր, որն իրականացնելու է 2018-2020 թվականներին՝ ՌԴ գիտությունների ակադեմիայի երկաֆիզիկայի կենտրոնի եւ Կազանի ֆեդերալ համալսարանի հետ համատեղ:

«ՀՀ-ում ուսումնասիրելու ենք երկրի մագնիսական դաշտի փոփոխությունն ու գնահատվելու է Մեանալճի գեոէկոլոգիական վիճակը, որը հիմնարար հետազոտության առումով կարևոր է արդիական է Հայաստանի համար», -ասում է Ջ.Կարապետյանն ու ավելացնում, որ ինստիտուտը 2017 թվականին հաջողություններ է ձեռք բերել նաեւ սարքաշինության ոլորտում:

«Ունեցանք նոր սարքեր, որոնք ուղղված են Հայաստանի ջրային էկոհամակարգի մշտադիտարկմանը, պատրաստմանը եւ արտադրությանը: Մեր հիմնական սեյսմիկ տվիչներին ավելացել են ջրային էկոհամակարգի մշտադիտարկման մշակումներ, որոնք ՀՀ համար շատ կարևոր են», -ասում է Ջ. Կարապետյանը:

2018 թվականի հոկտեմբերի 17-19-ը ԳԱԱ երկրաֆիզիկայի եւ ինժեներային սեյսմաբանության ինստիտուտը կազմակերպելու է միջազգային գիտական դպրոց Սպիտակի կործանարար երկրաշարժից 30 տարի անց «Երկրաֆիզիկայի, ինժեներային սեյսմաբանության, սեյսմակայուն շինարարության արդի խնդիրները» խորագրով, որը նվիրված է ակադեմիկոս Արմեն Նազարովի ծննդյան 110 ամյակին: